Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

ԱՎԱՆԳԱՐԴ

ՀԼԿՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՕՐԳԱՆ • „АВАНГАРД." ОРГАН ЦК ЛКСМ АРМЕНИИ

№ 114 (8087)
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ,
24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
1975 Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
1923 ԹՎԱԿԱՆԻՑ

ԳԻՆԸ՝ 2 ԿՈՊ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԲՆԱԳԾՈՒՄ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆԸ

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը ժողովուրդների բարեկամության շքանշանն ամրացնում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի դրոշին:

Լուսանկար՝ Արմենպրեսի

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան իրավամբ անվանում են մեր հանրապետությունում գիտական մտքի զարգացման գլխավոր շտաբը: Անխզելիորեն, օրգանապես կապված լինելով ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, մյուս միութենական հանրապետությունների առաջատար գիտական կենտրոնների հետ, նա իր գոյության տարիներին զգալի ավանդ է ներդրել հայրենական ու համաշխարհային գիտության բնագավառում: Ֆունդամենտալ և կիրառական գիտելիքների մի շարք կարևոր բնագավառներում հայ գիտնականների կատարած հաջող հետազոտությունները նրանց արժանավոր հեղինակություն և ճանաչում են բերել:

Սովետական գիտության, տնտեսության, մշակույթի զարգացման, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման ասպարեզում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ծառայությունների բարձր գնահատականը հանդիսացավ նրա պարգևատրումը Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

Սեպտեմբերի 23-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում կայացավ հանրապետության գիտությունների ակադեմիայի հանդիսավոր ժողովը՝ նվիրված ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշանի հանձնմանը: Դահլիճում հավաքվել էին առաջատար գիտնականներ, Երևանի հետազոտական հիմնարկությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատակիցներ: Այստեղ էին եկել նաև արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչներ, կուսակցական ու սովետական աշխատողներ, գրականության ու մշակույթի գործիչներ, ուսանողներ:

Նախագահությունում են ընկ. ընկ. Պ. Պ. Անիսիմովը, Գ. Ա. Արզումանյանը, Կ. Ս. Դեմիրճյանը, Վ. Բ. Ղայումյանը, Լ. Պ. Ղարիբջանյանը, Հ. Մ. Ոսկանյանը, Մ. Բ. Արզումանյանը, Հ. Վ. Թարջումանյանը:

Նրանց հետ նախագահությունում տեղեր են գրավում Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի և Մինիստրների սովետի նախագահի տեղակալները, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովը, ՍՍՀՄ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի, Վրացական ՍՍՀ-ի գիտությունների ակադեմիաների պատվիրակությունների անդամները, ականավոր գիտնականներ, արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորներ, կուսակցական, սովետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների ղեկավարներ:

Հանդիսավոր ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Ա. Արզումանյանը: Նա հայ գիտնականներին ի սրտե շնորհավորում է կառավարական բարձր պարգևի առթիվ, նրանց նոր մեծ հաջողություններ մաղթում հայրենական գիտության զարգացման գործում:

Կատարվում են Սովետական Միության և Հայկական ՍՍՀ-ի պետական հիմները:

Բուռն, երկարատև ծափահարությունների տակ պատվավոր նախագահություն է ընտրվում ՍՄԿԿ լենինյան Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոն՝ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի գլխավորությամբ:

Ձայնը տրվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանին:

— Այսօր մենք հավաքվել ենք այս դահլիճում համաժողովրդական ճանաչման տուրք տալու սովետական գիտնականների փառապանծ կոհորտաներից մեկին, որն իր արժանի ավանդն է մուծել հայրենական գիտության զարգացման գործում,— ասում է նա:

Ոչ մի բան մարդու սիրտն ու հոգին այնպես չի լցնում, որքան խորին գոհունակության զգացումը նրա վաստակի նկատմամբ, հայրենիքի բարօրության, իր ժողովրդի բարօրության, մարդկության բարօրության համար նրա գործունեության արդյունքների նկատմամբ:

Հպարտության ու բերկրանքի հենց այդ օրինական զգացումով են համակված Սովետական Հայաստանի գիտնականների, հանրապետության բոլոր աշխատավորների, ամբողջ հայ ժողովրդի սրտերը իրենց հարազատ գիտությունների ակադեմիայի համար, որը սովետական գիտության, էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման գործին մատուցած ծառայությունների, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման համար պարգևատրված է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

Մեր հանդիսավոր ժողովին մասնակցում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ մաթեմատիկայի և տեսական ֆիզիկայի բնագավառի ականավոր գիտնական, գիտության խոշոր կազմակերպիչ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի դիրեկտոր, սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան և ՍՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր, ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովի գլխավորությամբ:

Թույլ տվեք ձեր անունից ողջունել մեր թանկագին հյուրերին և, օգտվելով առիթից, խնդրել, որ նրանք ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությանը, բոլոր սովետական գիտնականներին հաղորդեն Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Մինիստրների սովետի, Հայաստանի գիտնականների և ամբողջ հայ ժողովրդի շնորհավորանքները մայր ակադեմիային Լենինի երկրորդ շքանշանով պարգևատրելու կապակցությամբ:

Հայրենիքի այդ բարձր պարգևը պսակում է հայրենական գիտության զարգացման 250-ամյա ուղին, վկայում այն հսկայական դերի ճանաչումը, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան՝ մեր երկրի գիտական մտքի գլխավոր կենտրոնը և գիտական կադրերի դարբնոցը խաղում է կոմունիստական շինարարության խնդիրների լուծման, մեր հայրենիքի տնտեսական հզորության ապահովման, նրա պաշտպանունակության ամրապնդման, սովետական ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման, նրա կրթության և կուլտուրայի զարգացման ասպարեզում:

Միաժամանակ, թույլ տվեք խորին շնորհակալության խոսքեր ասել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային՝ այն խոշոր ավանդի և անգնահատելի օգնության համար, որ նա ցույց է տվել ազգային գիտական կենտրոնների՝ միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների ստեղծման գործում, շարունակելով մնալ հանրապետական ակադեմիաների և մեր մեծ հայրենիքում բնակվող բոլոր ժողովուրդների ու ազգերի գիտնականներին ուղղություն տվող ուժը, լավ բարեկամն ու դաստիարակը:

Ողջունելով Անդրկովկասի եղբայրական հանրապետություններից եկած հյուրերին, մենք մեր ջերմ շնորհավորանքներն ենք հաղորդում Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին ու գիտնականներին՝ նրանց ակադեմիաները Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու առթիվ:

Միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաները Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելը խոր իմաստ ու մեծ խորհուրդ ունի: Ազգային հանրապետություններում մշակույթի իսկական ծաղկումը և գիտության արագ զարգացումը հնարավոր դարձան սովետական ժողովուրդների մեծ բարեկամության շնորհիվ:

Մեր երկրում ժողովուրդների բարեկամությունը ոչ միայն նոր տիպի ազգերի հոգևոր ընդհանրության ձևն է, ազգամիջյան նոր փոխհարաբերությունների կարևորագույն օրինաչափությունը: Նա մեր հասարակության մեծ շարժիչ ուժերից մեկն է, նյութական հիմքերի կերտողը, որը բազմապատկում է յուրաքանչյուր ժողովրդի հնարավորությունները և լայն ասպարեզ ապահովում յուրաքանչյուր հանրապետության և ամբողջությամբ վերցրած մեր երկրի էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի ծաղկման համար:

Մեր հանրապետության կազմավորումն ու զարգացումը, նրա սոցիալիստական վերակերտման հրաշքը ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության կենարար ուժի, կոմունիստների մեր մեծ կուսակցության լենինյան իմաստուն ազգային քաղաքականության ամենավառ օրինակն է:

Այդ բանը հատկապես ցայտուն կերպով կարելի է տեսնել Սովետական Հայաստանում գիտության ու տեխնիկայի զարգացման օրինակով:

Հայաստանը, ժողովրդի մտավոր պոտենցիալով, որը իր բազմադարյան պատմության ընթացքում աշխարհին տվել է գիտության, արվեստի և մշակույթի բազում հրաշալի ստեղծագործություններ, կորցնելով իր պետականությունը, ընկնելով օտարերկրյա ստրկացնողների լծի տակ, 20-րդ դարը թևակոխեց իբրև ահավոր ավերմունքի և անգրագիտության երկիր:

Լենինի գաղափարները, մեծ Հոկտեմբերը, կոմունիստների փառապանծ կուսակցությունը, մեր մեծ հայրենիքի ժողովուրդների և առաջին հերթին ռուս ժողովրդի բարեկամությունն ու փոխադարձ օգնությունը, ազատագրված հայ ժողովրդի ոգեշունչ աշխատանքը որպես փյունիկ թռչուն վերածնեցին մեր երկիրը մոխիրներից, այն դարձնելով ծաղկուն սոցիալիստական հանրապետություն՝ բարձր զարգացած արդյունաբերության ու գյուղատնտեսության հանրապետություն, ինքնատիպ սոցիալիստական կուլտուրայի և առաջավոր գիտության հանրապետություն:

Սոցիալիստական Հայաստանի գոյության առաջին իսկ օրերից մեր լենինյան կուսակցությունը հսկայական ուշադրություն էր նվիրում գիտության զարգացմանը, գիտատեխնիկական բարձրորակ կադրերի բանակի ստեղծմանը: Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը՝ մեր գիտության և կուլտուրայի առաջնեկը, որը դարձավ վերածնված ժողովրդի գիտական կադրերի դարբնոցը:

Սակայն սկզբնական շրջանում բազմաթիվ մասնագիտությունների գծով գիտական կադրերի սուր պակաս էր զգացվում: Գիտության շատ ճյուղերի գծով Հայաստանում դրանց պատրաստման մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Հարկավոր էր գիտական կադրեր ստեղծել մեր երկրի գիտական խոշոր կենտրոնների գիտնականների և բարձրագույն ուսումնական հաստատությունների օգնությամբ:

Այսօր մենք չենք կարող խորին շնորհակալության զգացումով բարի խոսքեր չասել Ռուսաստանի, Մոսկվայի, Լենինգրադի գիտնականների և ուսումնական հաստատությունների հասցեին, որոնք, կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, Հայաստանի երիտասարդ գիտության համար պատրաստեցին գիտական աշխատողների մի ամբողջ պլեադա:

Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը նոր կարևորագույն փուլ եղավ հանրապետությունում գիտության զարգացման գործում, բոլոր պայմաններն ապահովեց նրա բուռն աճի համար:

Մեր ակադեմիայի առաջին անդամների թվում էին գիտության այնպիսի կարկառուն մշակներ, ինչպիսիք են Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը և Մանուկ Աբեղյանը, որոնք խորունկ հետք են թողել բանասիրության ու պատմության բնագավառում, ակադեմիայի առաջին պրեզիդենտ Հովսեփ Օրբելին և գիտության այլ նշանավոր ներկայացուցիչներ: Ակադեմիայի գործունեության հենց առաջին տարիներին այնտեղ երևան եկան գիտական հետազոտությունների միանգամայն նոր ուղղություններ: Ակադեմիայի անդամներ՝ քիմիկոսներ Արմենակ Մնջոյանի, Ստեփան Ղամբարյանի, ֆիզիկոսներ Աբրահամ Ալիխանովի և Նորայր Քոչարյանի, ֆիզիոլոգներ Լևոն Օրբելու, Նորայր Սիսակյանի, Խաչատուր Կոշտոյանցի, բուսաբան Միքայել Թումանյանի անունները, որոնք մեզ մոտ գիտական խոր հետազոտություններ սկսեցին հիմնարար գիտությունների համապատասխան ճյուղերում, ընդմիշտ կմնան հայրենական գիտության պատմության մեջ:

Սովետահայ մշակույթի զարգացման գործում հսկայական ավանդ են մուծել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ավ. Իսահակյանը, Մ. Սարյանը:

Մեր հանրապետության էկոնոմիկայի, կուլտուրայի և գիտության զարգացման գործում մեծ է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի՝ ներկայումս գործող անդամների դերը, որոնց աշխատությունները հարստացրել են հայրենական և համաշխարհային գիտության գանձարանը:

Այդ շարքում հատկապես ուզում եմ նշել մեր ակադեմիայի պրեզիդենտ, մեր ժամանակի ականավոր աստղաֆիզիկոս, մեր երկրի խոշորագույն գիտնական ու հասարակական գործիչ, հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, ամենքիս կողմից սիրված ու հարգված Վ. Հ. Համբարձումյանի հսկայական ծառայությունը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելը խորապես խորհրդանշական է նրանով, որ այդ ակադեմիայի, ինչպես որ գիտությունների մյուս հանրապետական ակադեմիաների, հիմնումը հնարավոր դարձավ հենց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, լենինյան ազգային քաղաքականության իրականացման շնորհիվ:

Բոլոր հանրապետությունների գիտնականների ստեղծագործական բարեկամությունը, հատկապես ռուսական առաջավոր գիտության հիանալի ներկայացուցիչների հետ ունեցած բարեկամությունն ու համագործակցությունը հսկայական արժեք է և առաջընթացի զորեղ միջոց:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն բարձր է գնահատում այն, որ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան հենց ըսկզբից ձգտել է խելացիորեն և նպատակահարմար կերպով օգտագործել այդ մեծ հնարավորությունները: Չկրկնել միմյանց, այլ մտածված ու նպատակահարմար կերպով լրացնել միմյանց միասնական անսամբլում — ահա այն գիծը, որը պայմանավորել է մեր ակադեմիայի բազմաթիվ խոշոր հաջողությունները:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության կառավարությունը բարձր են գնահատում այն փաստը, որ մեր հանրապետության գիտությունների ակադեմիան իր գոյության հենց սկզբից ճիշտ կերպով ջանքերը կենտրոնացրեց ֆունդամենտալ գիտությունների այն ճյուղերի զարգացման վրա, որոնք առաջնահերթ նշանակություն ունեին և ունեն հանրապետության ժողովրդական տնտեսության առջև կանգնած խնդիրների լուծման համար:

Մենք մեր ակադեմիայից սպասում ենք, որ նա այսուհետև էլ հետևողականորեն կվարի ջանքերը գիտության առավել հրատապ ու հեռանկարային ուղղությունների մշակման վրա կենտրոնացնելու գիծ, կգլխավորի պայքարը ընդդեմ մանրաթեմայնության, հանուն գիտական հետազոտությունների բարձր արդյունավետության:

Բավական է տեսնել, թե գիտության ո՛ր բնագավառներում են լայն և արժանի հռչակ ստացել մեր ակադեմիայի աշխատանքները, որպեսզի իսկույն համոզվենք, որ դրանք այն բնագավառներն են, որոնցում նրան հաջողվել է կենտրոնացնել ջանքերը խիստ որոշակի ուղղությունում:

Աստղագիտության մեջ դա՝ ոչ ստացիոնար աստղերի և գալակտիկաների միջուկների ակտիվության հետազոտման բնագավառում ձեռք բերված մեծ հաջողություններն են: Եթե այսօր ամբողջ աշխարհի աստղաֆիզիկոսների շրջանում տարածում են գտել Բյուրականի գյուղում ծնունդ առած այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են աստղասփյուռները, գալակտիկաների միջուկների ակտիվությունը, տրապեցիայի տիպի սիստեմները և այլն, ապա դա՝ շնորհիվ այն բանի, որ բոլոր ուժերը լիովին կենտրոնացվել են վերոհիշյալ հրատապ պրոբլեմների լուծման վրա:

Հայաստանի մաթեմատիկոսները հռչակ են վայելում այն արդյունքների շնորհիվ, որ նրանք ձեռք են բերել՝ իրենց ջանքերը կենտրոնացնելով անալիտիկ ֆունկցիաների տեսության բնագավառում: Հենց կիրառական մաթեմատիկայի պրոբլեմների վրա մաթեմատիկոսների մի այլ մասի ուշադրության կենտրոնացման շնորհիվ մեր հանրապետությունը հռչակվեց մեզանում նախագծված և կառուցված մաթեմատիկական մեքենաներով:

Մեխանիկայի բնագավառում մեր գիտնականները խոշոր արդյունքների են հասել, մշակելով առավել հրատապ ու գործնականորեն կարևոր պրոբլեմներից մեկը՝ առաձգական թաղանթների հատկությունների ուսումնասիրումը:

Մեր ֆիզիկոսները առաջին անգամ գիտությանը տվեցին այսպես կոչված անցումային ճառագայթման հատկությունների մանրամասն ուսումնասիրությունը: Նրանք այսօր իրենց ջանքերն են ուղղում քվանտային էլեկտրոնիկայի, ոչ-գծային օպտիկայի, բյուրեղների աճեցման պրոբլեմների լուծման վրա:

Հսկայական են մեր ռադիոֆիզիկոսների ծառայությունները տիեզերական ռադիոկապի կատարելագործման բնագավառում:

Ամենուրեք հայտնի են մեր քիմիկոսների աշխատությունները քիմիական ռեակցիաների մեխանիզմի և քիմիական տարրական պրոցեսների բացահայտման բնագավառում: Մեր քիմիկոսները ստեղծել են նոր դեղամիջոցներ, որոնք օգտագործում են ամբողջ երկրի բժիշկները: Հենց գիտությունների ակադեմիայի քիմիկոսների նախաձեռնությամբ և օգնությամբ հանրապետությունում սկսեց զարգանալ փոքրատոննաժ քիմիական արդյունաբերությունը:

Բիոքիմիայի ամբողջ լայն բնագավառից ընտրելով նեյրոքիմիան, մեր ակադեմիան դարձավ այդ հատուկ պրոբլեմի գծով խոշորագույն կենտրոնը Միության մեջ: Մեր երկրում առաջին անգամ այստեղ հայտնագործվեցին նոր հորմոններ: Դրանց հետագա ուսումնասիրությունը կապված է գործնական բժշկության մեջ բազմաթիվ հնարավոր կիրառությունների հետ:

Ինքնատիպ է, մեր ակադեմիան նաև կենսաբանության բնագավառում, որտեղ մեծ ուշադրություն է նվիրվում մանրէակենսաբանության և հիդրոպոնիկայի պրոբլեմներին:

Զարգացնելով Իվան Պետրովիչ Պավլովի նշանավոր զինակից Լևոն Օրբելու ուղղություններն ու գաղափարները, մեր ֆիզիոլոգները մեծ հաջողությունների են հասել ֆիզիոլոգիական հետազոտությունների նորագույն նուրբ մեթոդների կիրառության ասպարեզում:

Ակադեմիան հսկայական աշխատանք է կատարել հասարակական գիտությունների բնագավառում, պատմության, փիլիսոփայության, տնտեսագիտության, հայ ժողովրդի լեզվի, գրականության և արվեստի, նրա անցյալի և ներկայի ուսումնասիրության ուղղությամբ: Պատմության և ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմների նկատմամբ ինտերնացիոնալիստական, դասակարգային մոտեցումը թույլ տվեց բացահայտել նոր հետաքրքրական փաստեր և ճիշտ լուսաբանել այն երևույթները, որոնք առաջ ներկայացվում էին անորոշ, իսկ շատ հաճախ էլ միանգամայն խեղաթյուրված լույսով: Այդ հաջողությունների շնորհիվ հայագիտության հետազոտությունների կենտրոնը, որով շատ էին զբաղվում և զբաղվում են արտասահմանյան գիտնականները, տեղափոխվեց Սովետական Միություն, Սովետական Հայաստան:

Մեր հնագետների փայլուն հայտնագործությունները այսօր արտացոլված են Հայաստանի սահմաններից դուրս հրատարակված բազմաթիվ դասագրքերում ու ձեռնարկներում:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր գիտնականներին այն ամենի համար, ինչ նրանք արել են Սովետական Հայաստանի բնական հարստությունների հետազոտման բնագավառում, այն բանի համար, որ նրանք հանրապետության կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ հսկայական աշխատանք են կատարել Հայաստանի համար ինդուստրիայի այնպիսի նոր ճյուղերի կազմակերպման պայմաններ ստեղծելու ուղղությամբ, որպիսիք իր ժամանակին եղել են էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերությունները, մաթեմատիկական մեքենաների արդյունաբերությունը, մանրէակենսաբանական արդյունաբերությունը և այլն:

Մենք գիտենք, որ այսօր ակադեմիայի ինստիտուտներում հիմնարար հետազոտություններ են կատարվում, որոնք նոր բարենպաստ պայմաններ կստեղծեն հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման համար:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և հանրապետության կառավարությունը հատկապես բարձր են գնահատում մեր գիտնականների հաստատակամ ձգտումը հասնելու գիտական աշխատանքի ամենաբարձր մակարդակին, օրեցօր բարձրացնելու գիտական խստապահանջությունը: Մենք գիտենք, որ հետազոտությունների մի շարք ճյուղերում Հայաստանի գիտությունների ակադեմիայի գործունեության բարձր մակարդակը բազմիցս նշվել է մեր երկրի առաջատար գիտական կազմակերպությունների կողմից, արժանանալով նաև միջազգային լայն ճանաչման: Այդ բարձր մակարդակը ամբողջ հայ ժողովրդի ուրախության և հպարտության առարկան է:

Մենք ոչ միայն հուսով ենք, այլև հաստատակամորեն պահանջում ենք, որ հետազոտությունների ամենաբարձր և ամենաառաջավոր մակարդակին հասնելու ձգտումը այսուհետև ևս լինի մեր ակադեմիայի ամենագլխավոր առանձնահատկություններից մեկը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան մենք գնահատում ենք այն բանի համար, որ նա բազմիցս ցույց է տվել գիտության մեջ ավանդույթն ու նորարարությունը զուգորդելու հմտություն:

Մենք գիտենք, թե մեր օրերում որքան բարձր են գիտատեխնիկական առաջադիմության տեմպերը: Այսուհետև ևս առաջավոր դիրքեր գրավելու համար ակադեմիայի ամբողջ կոլեկտիվը, հենվելով սովետական լավագույն գիտնականների և գիտական դպրոցների ավանդույթներին, պետք է ավելի ու ավելի համառորեն ու կազմակերպված աշխատի: Մենք մասնավորապես պահանջում ենք էլ ավելի միավորել գիտնականներին կուռ կոլեկտիվների մեջ, որպեսզի հնարավորություն ապահովվի լուծելու առավել խոշոր խնդիրներ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան վերջին տարիներս նշանակալի հաջողությունների է հասել գիտական կադրերի պատրաստման բնագավառում: Ֆիզիկայի, մաթեմատիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի բնագավառում աշխատող մեր երիտասարդ գիտնականները կատարել են մի շարք աշխատանքներ, որոնք շատ բարձր մակարդակի վրա են:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱՊՐԱԿՏԻԿ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Սեպտեմբերի 25-ին ՀԼԿ Կենտկոմի շենքում բացվում է «Զարգացած սոցիալիզմի պայմաններում գաղափարադաստիարակչական աշխատանքի գիտական կազմակերպումը» թեմայով հանրապետական գիտապրակտիկ կոնֆերանս:

Կոնֆերանսի սկիզբը՝ առավոտյան ժամը 10-ին: Մասնակիցների հաշվառումը՝ ժամը 9-ից:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԲՆԱԳԾՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ընկերնե՛ր։

Հանրապետությունում կան մոտավորապես 16 հազար գիտական աշխատողներ։ Դա նշանակում է, որ սովետական պետությունը հսկայական հնարավորություններ է ստեղծել մեր հանրապետությունում գիտության զարգացման համար։ Այլ խոսքով, այդ հսկայական թվով մարդիկ պետության շնորհիվ հնարավորություն ունեն բեղմնավոր կերպով աշխատելու գիտության բնագավառում։ Բայց հնարավորության առկայությունից մինչև նրա օգտագործումը ընկած է դժվարին, փշոտ և խրթին մաքառումներով լեցուն ճանապարհ և այն բանից, թե մեր կադրերը ինչպես են հաղթահարում այդ դժվարությունները, վերջին հաշվով, կախված է ամեն ինչ։

Ընկերնե՛ր։

Արդի հասարակության կյանքում գիտության հարաճուն դերը և այն անմիջական արտադրողական ուժ դարձնելը գիտության գործիչների առջև դնում են նոր և բարդ խնդիրներ, որոնց լուծումից մեծապես կախված են ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացման հնարավորությունները։

Ինչպես ասել է Լ. Ի. Բրեժնևը, «Ներկայումս հասարակական առաջադիմության տեմպերը, դեպի կոմունիզմ մեր առաջընթացի տեմպերը ավելի ու ավելի նկատելիորեն են կախված հասարակության ինտելեկտուալ պոտենցիալից, կուլտուրայի, գիտության, կրթության զարգացումից»։

Դա զգալիորեն բարձրացնում է գիտության գործիչների պատասխանատվությունը հասարակության հանդեպ և նրանց պարտավորեցնում ամեն կերպ բարձրացնել իրենց աշխատանքի արդյունավետությունը, աշխատել ուժերի առավելագույն լարումով ժամանակակից գիտության ու տեխնիկայի ամենաառաջավոր բնագծերում։

Ինչպես հայտնի է, Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը գիտության գործիչների առջև դրեց պարզ ու հստակ ծրագիր։

Իրագործելով կուսակցության ու կառավարության այդ դիրեկտիվները, մեր հանրապետության գիտնականները և մասնավորապես Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվները մեծ ու բեղմնավոր աշխատանք են կատարել և իններորդ հնգամյակի տարիներին զգալի հաջողությունների հասել բնական ու հասարակական գիտությունների առանձին ճյուղերի զարգացման գործում։ Բայց դա դեռ չի նշանակում, թե գիտությունների ակադեմիայի գործունեության մեջ չկան վրիպումներ և թերություններ։

Ակներև է, որ դրանց վերացման համար անհրաժեշտ են գիտական աշխատանքի կազմակերպման ավելի ճկուն և կատարյալ ձևեր, ժամանակակից գիտության առավել խոշոր և հրատապ պրոբլեմների լուծման բնագավառում ստեղծագործական ջանքերի և նյութական միջոցների էլ ավելի մեծ կենտրոնացում, գիտաշխատողների աշխատանքի արդյունավետության բարձրացման, գիտահետազոտական աշխատանքների պլանավորման և վերահսկողության հետագա կատարելագործման ռեզերվային հնարավորությունների մշտական որոնումներ, աշխատանքների նախատեսված ծավալների կատարման և հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների արմատավորման համար պատասխանատվության բարձրացում։

Հանրապետության ժողովրդական տնտեսության հաջող զարգացման համար առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր է գիտության և արտադրության կապի հետագա ամրապնդումը։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ կառավարությունը գիտության և արտադրության գործիչների առջև դրել են արմատական խնդիրներ, որոնց նպատակն է ոչ միայն ընդլայնել և ամրապնդել ստեղծագործական կապերն ու սերտ համագործակցությունը, այլև հետզհետե անցնել գիտության և արտադրության ստեղծագործական ինտեգրացման ավելի բարձր ձևերի, այդ ինտեգրացման օպտիմալ, ներդաշնակ ու արդյունավետ ձևերի կազմակերպման։

Ընկերնե՛ր։

Ինչպես ձեզ հայտնի է, ներկայումս հանրապետական կուսակցական կազմակերպությունը բոլոր կոմունիստների, բոլոր աշխատավորների ջանքերը նպատակադրում է տնտեսական, կուլտուրական շինարարության մեջ և կուսակցական աշխատանքում տեղ գտած լուրջ թերությունների վերացմանը։

Իրագործելով մեր կուսակցության XXIV համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների որոշումները, առաջնորդվելով կուսակցության տնտեսական քաղաքականության հարցերի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի ցուցումներով, հանրապետության կուսակցական կազմակերպությունը մշակել է և հետևողականորեն իրականացնում է հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ գործերի վիճակը արմատապես բարելավելու խոշոր կազմակերպական միջոցառումներ։ Էկոնոմիկայի բնագավառում մեր գործունեության կոմպլեքսային ծրագիրը ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի այս տարվա ապրիլին ընդունած որոշումն է, որը սահմանում է հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները։ Այդ որոշումը ընկալվեց որպես Հայաստանի բոլոր կոմունիստների և բոլոր աշխատավորների առաջիկա տարիների աշխատանքների մարտական ծրագիր։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1975 թվականի հուլիսյան պլենումը կոնկրետ միջոցառումներ մշակեց այդ որոշման կենսագործման համար։ Հայաստանի գիտնականները և մասնավորապես գիտությունների ակադեմիայի սիստեմի գիտաշխատողները պետք է իրենց պարտականությունն ու սրբազան պարտքը համարեն նախատեսված ծրագրի կենսագործմանը ամենայն ակտիվությամբ մասնակցելու և ամենուրեք, որտեղ հնարավոր է, այդ խնդիրների ժամանակին և որակյալ կատարումն ապահովելու համար իրենց նվաճումները, գիտելիքներն ու փորձը օգտագործելը։

Ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրներին համապատասխան, մեր արդյունաբերությունը ֆիզիկա-տեխնիկական գիտությունների ներկայացուցիչներից սպասում է նոր մշակումներ և առաջարկություններ՝ հանրապետությունում մեքենաշինության ոչ նյութատար ճյուղերի՝ սարքաշինության, էլեկտրատեխնիկական և ռադիոէլեկտրոնային արդյունաբերության, օպտիկական սարքաշինության, հաշվողական տեխնիկայի և արդյունաբերության հեռանկարային ու շահութաբեր ուրիշ ճյուղերի արտադրությունը ընդլայնելու համար։

Քիմիական գիտությունների ներկայացուցիչների առջև խնդիր է դրվում գիտական պաշար ստեղծել նոր և արժեքավոր նյութերի արտադրության ուղղությամբ հանրապետության քիմիական արդյունաբերությունը զարգացնելու համար։

Երկրի մասին գիտության բնագավառի մասնագետները գեոտեխնիկական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ պետք է ապահովեն գունավոր և հազվագյուտ մետաղների պաշարների, ոչ հանքային նյութերի և հանքային ջրերի պաշարների առավել լրիվ և կոմպլեքսային օգտագործման գիտական հիմնավորումներ։

Կենսաբանական պրոֆիլի գիտական հիմնարկների կոլեկտիվների առջև խնդիր է դրված բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնապահության մթերատվությունը, արմատավորել Հայկական ՍՍՀ-ի պայմաններում հողագործության և անասնապահության վարման, հողի էռոզիայի դեմ պայքարելու, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի արդյունավետ մանրէակենսաբանական մեթոդների արմատավորման, կենսոլորտի պահպանության հրատապ հարցերի մշակման առավել ռացիոնալ սխեմաներ։

Հասարակական գիտությունների բնագավառում անհրաժեշտ է շարունակել զարգացած սոցիալիստական հասարակարգի կառուցման, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, աշխատավորների կոմունիստական դաստիարակության, բուրժուական գաղափարախոսության քննադատության, ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության տնտեսական, սոցիալական և փիլիսոփայական պրոբլեմների, պատմության, գրականության և արվեստի պրոբլեմների հետագա՝ ուսումնասիրումը։

Հասարակական գիտությունների ներկայացուցիչների և մասնավորապես սոցիոլոգների, հոգեբանների, իրավագետների առջև նոր կարևոր խնդիրներ են դրվում հանրապետության արդյունաբերության ու գյուղատնտեսության հետագա ինտենսիվ զարգացման ընդարձակ ծրագրի, արտադրության նոր, մասնագիտացված ուղղությունների առաջացման կապակցությամբ և դրանից բխող ամբողջ ժողովրդական տնտեսության կառուցվածքի օրինաչափ փոփոխությունների, գիտատեխնիկական առաջընթացի և ընդհանուր առմամբ հասարակական հարաբերությունների արագացման կապակցությամբ։

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ հասարակական գիտությունների զարգացումը և պրակտիկայում նրանց հանձնարարականների արմատավորումը ոչ պակաս կարևոր է, քան նյութական արտադրության ոլորտում բնական գիտությունների նվաճումների օգտագործումը։

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած բոլոր թերությունների լրիվ վերացման համար մղվող պայքարում դժվար է գերագնահատել մեր գիտնականների, մեր հանրապետության մտավորականության դերը։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը վստահ է, որ մեր գիտնականները, բոլոր մտավոր աշխատողները միշտ կլինեն պայքարի առաջավոր գծերում, ակտիվորեն կնպաստեն Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հունվարյան պլենումի նշած միջոցառումների իրականացմանը։

Այդ վստահությունը հիմնվում է սովետական գիտնականների լավագույն հատկանիշներից մեկի՝ բարձր քաղաքացիականության վրա, երբ հայրենիքի հանդեպ, ժողովրդի և կուսակցության հանդեպ պարտքի զգացումը միշտ առաջին պլանի վրա է։ Խնդիրն այն է, որ այդ նույն ոգով դաստիարակվի մեր տաղանդավոր գիտական երիտասարդությունը։

Կուսակցության և կառավարության կողմից մեր հանրապետության առջև դրված մեծ և պատասխանատու խնդիրների լուծման համար մեզ հարկավոր է մեր բոլոր կադրերի ինքնամոռաց և համերաշխ աշխատանքը, որոնք ընդունակ են իրենց բոլոր ուժերը նվիրաբերելու կոմունիստական շինարարությանը։ Մենք պետք է բոլոր պայմանները ստեղծենք և լայն ասպարեզ ապահովենք, որպեսզի գիտություն մուտք գործեն երիտասարդ թարմ ուժեր, հնացած ավանդույթները խորտակող, աճող նորարար գիտնականներ։ Անհրաժեշտ է վճռականապես կասեցնել գիտության «մենաշնորհացման» հոգեբանությունը, նախաձեռնության ճնշման փաստերը, մտցնել թե՛ մեր նվաճումների և թե՛ թերությունների ինքնաքննադատական վերլուծման հոգեբանություն։

Ընկերնե՛ր։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանը, նրան Լենինի երկրորդ շքանշանով պարգևատրելը, միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաները Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելը վերածվեցին սովետական գիտության մեծ տոնի։ Դա սովետական գիտության մեծ նվաճումների ճանաչումն է։ Դա այն մեծ դերի և հսկայական նշանակության ճանաչումն է, որ գիտությունն ունի մեր երկրում։

Սովետական մարդիկ սիրում են և բարձր են գնահատում իրենց գիտնականներին, ամենաջերմ զգացմունքները տածում նրանց հանդեպ։ Գիտությունը մեր ժողովրդի աչքում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հզոր գործոն չէ միայն, այն ավելի ու ավելի է համակում աշխատավոր լայն մասսաների մտքերը, դառնում «նրա իդեալական և միաժամանակ գործնական հարստությունը»։

Կարլ Մարքսի դիպուկ արտահայտությամբ, մտածողները միշտ անտեսանելի թելերով կապված են ժողովրդի մարմնի հետ։ Սովետական գիտնականները սովետական ժողովրդի միս ու արյունն են, նրանք իրենց սրտերի ամբողջ հուրը, իրենց մտքի բոլոր ուժերը նվիրաբերում են մեր կուսակցության կողմից առաջադրված ազնիվ և մարդասիրական խնդիրների լուծմանը։

Սովետահայ գիտնականները մեր մեծ հայրենիքի գիտնականների միլիոնանոց բանակի մարտական ջոկատն են։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան՝ հանրապետության գիտական մտքի գլխավոր կենտրոնը, սովետական առաջավոր գիտության լավագույն ավանդույթների հավատարիմ հետևորդն է։ Հայկական ՍՍՀ-ի գիտությունը միասնական, բազմազգ սովետական գիտության օրգանական բաղկացուցիչ մասն է։

Եվ այսօր, երբ ամբողջ սովետական ժողովուրդը, այդ թվում մեր հանրապետության աշխատավորները նախահամագումարյան աշխատանքային հերթափոխի են կանգնել ՍՄԿԿ առաջիկա XXV համագումարը արժանավայել դիմավորելու համար, երբ աշխատավորների, մեր ժողովրդի հոգևոր և նյութական բոլոր ուժերը մոբիլիզացվում են հնգամյակի եզրափակիչ տարվա և ամբողջ հնգամյակի առաջադրանքների հաջող ավարտման համար, երբ վիթխարի պայքար է մղվում հանուն պայծառ ապագայի, մեր գիտնականները, ինչպես միշտ, ընթանում են այդ պայքարի, հայ ժողովրդի համառ աշխատանքի առաջին շարքերում։

Թույլ տվեք, թանկագին ընկերներ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի անունից, ձեր անունից, Սովետական Հայաստանի ժողովրդի անունից գիտությունների մեր ակադեմիային, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից-անդամներին, ակադեմիայի սիստեմի բոլոր աշխատողներին, ինչպես նաև բոլոր հայ գիտնականներին ջերմորեն և ի սրտե շնորհավորել հարազատ ակադեմիան կառավարական բարձր պարգևով պարգևատրելու առթիվ և նրանց նորանոր հաջողություններ մաղթել իրենց ոչ դյուրին, բայց պատվավոր ու ազնիվ գործունեության մեջ, ցանկանալ առողջություն և երջանկություն անձնական կյանքում։

(ԸՆԿ. Կ. Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՃԱՌԸ ԼՍՎԵՑ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԲԱԶՄԻՑՍ ԸՆԴՀԱՏՎՈՒՄ ԷՐ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)։

Այնուհետև ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը հրապարակեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը։ Հանդիսավոր ժողովի մասնակիցների բուռն, երկարատև ծափահարությունների ներքո նա շքանշանն ամրացրեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի դրոշին։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անունից հայ գիտնականներին ի սրտե շնորհավորեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովը։

— Ակադեմիային կառավարական պարգևի շնորհումը վկայում է, թե կուսակցությունն ու կառավարությունը ինչպիսի բարձր գնահատական են տալիս ֆունդամենտալ և կիրառական գիտությունների զարգացման բնագավառում Հայաստանի գիտնականների ձեռք բերած մեծ հաջողություններին, երկրի գիտատեխնիկական պոտենցիալի բարձրացման մեջ նրանց ներդրած ավանդին,— ասաց նա։

Հայաստանը հին մշակույթի երկիր է։ Իր բազմադարյան պատմության ընթացքում տաղանդավոր հայ ժողովուրդը աշխարհին տվել է այնպիսի կարկառուն մտածողներ, գիտության ու արվեստի այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին, Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Կոմիտասը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ, որոնք անգնահատելի ավանդ են ներդրել համաշխարհային քաղաքակրթության գանձարանում։

Ռուս և հայ ժողովուրդների գիտության ու մշակույթի զարգացման համար պատմական մեծ դեր են խաղացել Հայաստանի ավանդական կապերը Ռուսաստանի հետ։ Դեռևս նախահեղափոխական Ռուսաստանում իրենց բեղմնավոր մեծ գործունեությունն են սկսել բազմաթիվ հայ խոշոր գիտնականներ։ Նրանց թվում են Օրբելի եղբայրները, Ալեքսանդր Թամամշյանը, Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը և շատ ուրիշներ։

Այնուհետև ակադեմիկոս Բոգոլյուբովը նշեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման լայն ուղի բացեց մեր երկրի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի առջև։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ նա իր երկիրը դարձրեց զարգացած էկոնոմիկայի, ազգային բարձր մշակույթի և առաջավոր գիտության հանրապետություն։

Հայ ժողովրդի մշակութային կյանքում ականավոր իրադարձություն եղավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը 1943 թվականին։ Հաջորդ տասնամյակներում նա դարձավ երկրի խոշորագույն գիտական կենտրոններից մեկը, որտեղ ժամանակակից գիտության գրեթե բոլոր հիմնական ուղղություններում հետազոտություններ են կատարվում հաստատված ավանդույթներին և հանրապետության ժողովրդական տնտեսության խնդիրներին համապատասխան։ Մի շարք կարևոր գիտական պրոբլեմների մշակումով ակադեմիան առաջատար տեղ է գրավում ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս։

Համաշխարհային հռչակ է վայելում Հայաստանի աստղագիտության ու աստղաֆիզիկայի դպրոցը, որի ստեղծողն ու ճանաչված ղեկավարն է ակադեմիկոս Համբարձումյանը։

Հայ գիտնականները ֆունդամենտալ ավանդ են ներդրել ժամանակակից մաթեմատիկայի մի շարք հրատապ ուղղությունների զարգացման գործում, որը մասնավորապես նպաստել է Հայաստանում էլեկտրոնա-հաշվողական նոր տիպերի մեքենաների ստեղծմանը։ Հանրահայտ են հանրապետության գիտնականների նվաճումները մեխանիկայի բնագավառում։ Արժանի ճանաչում է վայելում հայ ֆիզիոլոգների դպրոցը։ Լայն ճակատով հետազոտություններ են կատարվում ժամանակակից տեսական և էքսպերիմենտալ ֆիզիկայի հիմնական ուղղությունների մեծ մասի գծով։ Քիմիկոս գիտնականների ջանքերով ստեղծվել են մի շարք արժեքավոր դեղամիջոցներ, և նրանց շատ հետազոտություններ հարաճուն կիրառում են գտնում քիմիական արդյունաբերության մեջ։

Երկրաբան գիտնականները հայտնաբերել են օգտակար հանածոների նոր հանքավայրեր, որը հիմք է ծառայել հանրապետությունում գունավոր մետալուրգիայի, մի շարք քիմիական արտադրությունների հետագա զարգացման համար։

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված կենսաբանական և հասարակական գիտությունների բնագավառում։ Մասնավորապես լայն հռչակ են ստացել հայ պատմաբանների, հնագետների և բանասերների աշխատանքները։

ՍՄԿԿ XXIV համագումարի կանխանշած տնտեսական ու սոցիալական խնդիրների հաջող լուծումը, շարունակեց հռետորը, անխզելիորեն կապված է հանրային արտադրության արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականության տեմպերի արագացման հետ։ Կոմունիստական շինարարության արդի փուլում այս հարցերի լուծման մեջ ավելի ու ավելի է մեծանում գիտության դերն ու նշանակությունը, որը վճռական ավանդ է ներդնում երկրի գիտատեխնիկական առաջադիմության, տնտեսական պոտենցիալի և կուլտուրայի մակարդակի բարձրացման գործում։

Այս կապակցությամբ Հայաստանի գիտնականների առջև խնդիր է դրվում արագացնել ֆունդամենտալ ու կիրառական գիտությունների բնագավառի կարևորագույն պրոբլեմների մշակումը, զգալիորեն կրճատել արտադրության մեջ գիտության նվաճումների արմատավորման ժամկետները, գիտական ուժերը, նյութական ու ֆինանսական ռեսուրսները առավելագույնս կենտրոնացնել գիտության առաջատար և հեռանկարային ճյուղերում։

Այս խնդիրների մասշտաբներն ու բարդությունը վկայում են գիտությանը ներկայացվող պահանջների մեծացման, ժողովրդական տնտեսության զարգացման մեջ գիտական գիտելիքների գերիշխող դերի և գիտատեխնիկական առաջադիմության տեմպերի համար գիտնականների հարաճուն պատասխանատվության մասին։

Կասկածից վեր է, որ Հայաստանի գիտնականների առջև կանգնած խնդիրները հաջողությամբ կլուծվեն, որովհետև Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը բացառիկ մեծ ուշադրություն են նվիրում գիտության զարգացմանը։

Թույլ տվեք վստահություն հայտնել, վերջում ասաց Ն. Ն. Բոգոլյուբովը, որ Հայաստանի գիտնականները, ոգեշնչվելով իններորդ հնգամյակի եզրափակիչ տարվա հաջողություններով, ՍՄԿԿ XXV համագումարը կնշանավորեն նոր նվաճումներով, արժանի ավանդ կներդնեն այն վիթխարի խնդիրների լուծման գործում, որ կանգնած են հաստատուն քայլերով դեպի կոմունիզմ ընթացող մեր բազմազգ երկրի առջև։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բազմահազարանոց կոլեկտիվին մեծ հաջողություններ է մաղթում սովետական գիտության զարգացման գործում ի բարօրություն մեր մեծ հայրենիքի։

Գիտելիքների շատ բնագավառներում հայ գիտնականների նվաճումներին իր ողջույնի խոսքում բարձր գնահատական տվեց Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխ-պրեզիդենտ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ե. Կ. Խարաձեն։ Կանգ առնելով հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու փոխադարձ օգնության պատմության վրա, նա ընդգծեց, որ այդ կապերը հատկապես զարգանում և ավելի են ամրապնդվում սովետական ժամանակաշրջանում։ Երկու հանրապետությունների գիտությունների ակադեմիաների ինստիտուտներում և համալսարանների ամբիոններում վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն աշխուժացել և ընդլայնվել են հայ-վրացական կուլտուր-պատմական, սոցիալ-տնտեսագիտական, լեզվաբանական և գրականագիտական հետազոտությունները։

Մեր հմուտ գիտնականները, ասաց նա, դաստիարակում են երիտասարդ հայագետների շնորհալի կադրեր։ Մենք գիտենք նաև, որ վրացագետներ են պատրաստվում եղբայրական Հայաստանում և ուրախանում ենք դրա համար։ Թե՛ մենք և թե՛ դուք բոլոր պայմաններն ունենք, որ էլ ավելի խորացնենք և զարգացնենք ստեղծագործական համագործակցությունը մեր երկու հանրապետությունների և երկրի մյուս բոլոր հանրապետությունների միջև։ Դրան նպաստում են արտաքին քաղաքական իրադրությունը, որը պայմանավորված է կուսակցության խաղաղասեր, իմաստուն քաղաքականությամբ, կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության հսկայական հոգատարությունը գիտության զարգացման նկատմամբ, մեր շահերի ու ձգտումների ընդհանրությունը, յուրաքանչյուր հանրապետության գիտական հիմնարկությունների հարուստ փորձը, որը նրանք պատրաստ են առատաձեռնորեն հաղորդելու միմյանց։

Ամբիոնի մոտ է Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ Մ. Ս. Կաշկայը։ Հայ կոլեգաներին ջերմորեն շնորհավորելով կառավարական բարձր պարգևի առթիվ, նա ասաց.

— Ինձ համար այս դահլիճում ելույթ ունենալը առանձնապես հաճելի է։ Չէ՞ որ հատկապես ինձ է պատիվ վիճակվել 1943 թվականին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ադրբեջանի մասնաճյուղի կոլեկտիվի անունից հայ գիտնականներին ողջունել հանրապետության ակադեմիայի կազմակերպման առթիվ։ Այսօրվա իրադարձությունը պերճախոս կերպով վկայում է, որ ձեր հանրապետության գիտական աշխատողների բազմահազարանոց ջոկատը պատվով է արդարացրել կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության վստահությունը, որոնք Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին իսկական հայրական հոգատարություն ցուցաբերեցին միութենական հանրապետություններում գիտության զարգացման նկատմամբ։

Այնուհետև նա նշեց երկու եղբայրական հանրապետությունների գիտական կոլեկտիվների միջև անշեղորեն աճող ու ընդլայնվող կապերը, հայ գիտնականների մեծ վաստակը Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Շամախիի աստղադիտարանի կազմակերպման ու զարգացման գործում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին իսկական անդամների անունից ելույթ ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտի դիրեկտոր Հ. Խ. Բունիաթյանը։

— Խորապես հատկանշական է, որ մեր ակադեմիայի դրոշը այսօր զարդարվեց Ժողովուրդների բարեկամության շքանշանով,— ասաց նա։— Չէ՞ որ իսկական գիտությունը կարող է զարգանալ միայն խաղաղության ու բարեկամության մթնոլորտում, տարբեր ժողովուրդների գիտության գործիչների սերտ համագործակցության ու փոխգործության մթնոլորտում։

Մեր ակադեմիան, որն ստեղծվեց Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին, սկսեց արագորեն ամրապնդվել ու զարգանալ արդեն հետպատերազմյան տարիներին, սովետական ժողովուրդների եղբայրական բարեկամության ու փոխադարձ օգնության պայմաններում։ Հիշում եմ ակադեմիայի առաջին քայլերը, նրա սահմանափակ պայմանները, որակյալ կադրերի բացակայությունը գիտելիքների բազմաթիվ կարևոր ճյուղերում։ Այսօր այդ ամենը արդեն պատմություն է դարձել։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որը շրջապատված է կուսակցության ու կառավարության մշտական հոգատարությամբ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակտիվ օգնությամբ դարձել է մեր երկրում գիտական մտքի զարգացման առաջատար օջախներից մեկը։ Ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելը մեզ պարտավորեցնում է աշխատել ավելի լավ և ավելի շատ, լայնորեն ծավալել տեսական ու գործնական կարևոր պրոբլեմների հետազոտությունները, ուժեղացնել գիտության դերը սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ն. Հ. Առաքելյանը իր ելույթում հայ գիտնականների երիտասարդ սերնդի անունից ասաց, որ նրանք բոլորը անկեղծ երախտագիտությամբ են ընկալում այն հսկայական օգնությունը, որ հանրապետության գիտական կոլեկտիվներին մշտապես ցույց է տվել և շարունակում է ցույց տալ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան։

— Մեզ համար թանկագին են սովետական գիտության բազմաթիվ կարկառուն գործիչների անունները, որոնք մեծ վաստակ ունեն Հայաստանում գիտական կադրերի պատրաստման և այստեղ գիտելիքների մի շարք կարևոր ճյուղերի զարգացման գործում,— նշեց նա։— Մեկ անգամ ևս կոմունիստական կուսակցությանն ու սովետական կառավարությանը մեր շնորհակալությունը հայտնելով մեր աշխատանքի բարձր գնահատականի համար, մենք հավաստիացնում ենք, որ մեր բոլոր ջանքերը կգործադրենք հայրենական գիտության հետագա զարգացման նպատակին։

Իրենց հանրապետության գիտնականների հաջողությունների համար հպարտության օրինական զգացումով, նրանց աշխատանքի նկատմամբ խորին հարգանքով, միութենական հանրապետություններում գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերվող հոգատարության և ուշադրության համար կոմունիստական կուսակցությանն ու սովետական կառավարությանն ուղղված երախտագիտությամբ էին տոգորված Հայաստանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ն. Ա. Խլղաթյանի, Էջմիածնի շրջանի Նորակերտի սովխոզի դիրեկտոր, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ս. Ե. Նազարյանի, Երևանի պետական համալսարանի ասպիրանտուհի Ա. Ս. Սողոմոնյանի ելույթները։ Նրանք խոսեցին այն մեծ օգնության մասին, որ գիտնականները ցույց են տալիս արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության գործնական հարցերի լուծմանը, նշեցին ակադեմիայի դերը հանրապետությունում գիտական կադրերի պատրաստման գործում։

Խոսքը տրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին։

— Բառերով դժվար է հաղորդել այն հուզմունքն ու երախտագիտությունը, որ այսօր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշան հանձնելու օրը զգում է նրա կոլեկտիվը,— ասում է նա։— Մեր անսահման շնորհակալությունն ենք հասցեագրում ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ կառավարությանը՝ Հայաստանում և ամեն մի միութենական հանրապետությունում գիտության այս նոր խրախուսման համար։

Ուրախալի է տեսնել, թե ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն, նրա քաղբյուրոն և անձամբ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը ինչպես են ամեն օր հետևում սովետական գիտության զարգացմանը։ Դա շատ բան է պարտավորեցնում սովետական գիտության աշխատողներին։

Մենք շնորհակալություն ենք հայտնում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և հանրապետության կառավարությանը ակադեմիայի կարիքների նկատմամբ ցուցաբերած մշտական հոգատարության և ուշադրության համար։ Մենք շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանին՝ ակադեմիայի կոլեկտիվի աշխատանքին տված բարձր գնահատականի և ակադեմիայի հետագա հաջող գործունեության բարեմաղթությունների համար։

Կարելի է վստահորեն պնդել, որ մեր ակադեմիայի կյանքի 32 տարում գիտնականների ձեռք բերած ամեն մի նվաճում պայմանավորված է եղել կուսակցության օգնությամբ, իրագործվել է նրա ցուցումների և խորհուրդների հիման վրա։

Սովետական ժողովուրդը մեզ, ֆունդամենտալ գիտությունների ներկայացուցիչներիս, կանչեցրել է բնության գաղտնիքների ճանաչման, բնության ու հասարակության մեջ երևույթները կառավարող օրինաչափությունների բացահայտման համար մղվող պայքարի առաջավոր գծում այն հաշվով, որ այդ կերպ ձեռք բերված գիտելիքը օգտագործվի մարդկային հասարակության առաջընթացի համար։

Իսկ այդ պայքարի առաջավոր գծում գտնվելը մեծ պատասխանատվություն է նշանակում։ Առաջավոր գծում գտնվողից շատ բան է պահանջվում։ Նա հաղթանակի համար չպետք է խնայի իր ուժերը, իր առողջությունը և նույնիսկ իր կյանքը։ Նա պետք է միշտ հիշի, որ ինչպիսի հաջողությունների էլ հասնի, միևնույն է, իրենից կարելի է ավելի շատ պահանջել, քանի որ ճանաչման բուն խնդիրները, գիտության անելիքները անսահման մեծ են։

Այդ խնդիրները հաջողությամբ լուծել կարելի է միայն հմուտ աշխատանքի և ուժերի ու միջոցների նպատակահարմար բաշխման դեպքում, շարունակեց Վ. Հ. Համբարձումյանը։ Մեր կուսակցությունը մեզանից պահանջում է, և այդ պահանջը այսօր առանձնապես կրկնվեց, որ մենք ոչ միայն ձեռք բերենք գիտական խոշոր նվաճումներ, այլև հասնենք այն բանին, որ դրանք լավագույն կերպով օգտագործվեն մեր երկրի, նրա ժողովրդական տնտեսության, մեր հանրապետության էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման համար։

Որքան ավելի լավ մշակված ու փորձարկված լինի տվյալ գիտական նվաճումը, այնքան ավելի մեծ կլինի արտադրության և տնտեսական ապարատի աշխատողների պատրաստակամությունը կյանքում այն օգտագործելու համար։ Գաղտնիք չէ, որ մեր հետազոտությունների մի զգալի մասը, որոնք երբեմն շատ լավ նվաճումներ են լինում, այդ տեսակետից մինչև վերջ չեն հասցվում։

Մեր հանրապետության գիտնականներին զգալի խնդիրներ են բաժին ընկնում Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման մասին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի այս տարի ընդունած որոշման կատարման ուղղությամբ։ Ամեն կերպ ձգտելով ժողովրդական տնտեսության մեջ մեր ուսումնասիրությունների արդյունքները օգտագործելուն, դրանց առավել արդյունավետության հասնելուն, մենք պետք է նաև ամեն բան անենք, որպեսզի հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ սիստեմատիկաբար արմատավորվեն ոչ միայն մեր երկրի, այլև համաշխարհային գիտության նվաճումները։ Դրանց արմատավորման արագացմանը պետք է աջակցություն ցույց տան հանրապետությունում գոյություն ունեցող մեծաթիվ ճյուղային ինստիտուտները և կոնստրուկտորական բյուրոները։ Բայց իրենց վրա շատ բան պետք է վերցնեն նաև գիտությունների ակադեմիայի հիմնարկները։

Վերջում Վ. Հ. Համբարձումյանն ասաց.

— Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն հանրապետության գիտությունների ակադեմիայի առջև նոր, ավելի բարձր պահանջներ է դրել։ Դժվարին խնդիրները միշտ ոգևորել և մոբիլիզացրել են սովետական գիտության գործիչներին։ Ուստի, ի պատասխան պատվավոր պարգևի, մենք պարտավորվում ենք համառ աշխատանքով լուծել առաջադրված խնդիրները, արժանավայել դիմավորել հարազատ կուսակցության XXV համագումարը։

Ամբիոնին է մոտենում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխ-պրեզիդենտ, հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը։

Նա ընթերցում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին հասցեագրված ողջույնի նամակը։ Ժողովի մասնակիցների միաձայն ընդունած այդ փաստաթղթում Հայաստանի գիտնականների բազմահազարանոց ջոկատի անունից հարազատ կոմունիստական կուսակցությանը և սովետական կառավարությանը խորին երախտագիտություն է հայտնվում բարձր պարգևի, գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերվող հսկայական ուշադրության և հոգատարության համար։

Հայաստանի գիտնականները, ասված է նամակում, լավ են գիտակցում իրենց պատասխանատվությունը, զարգացած սոցիալիզմի հասարակության անդամների իրենց բարձր քաղաքացիական պարտքը։ «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը, որը որակապես նոր փուլ է նշանավորում հանրապետության էկոնոմիկայի բոլոր ճյուղերի համար, լուրջ և պատասխանատու խնդիրներ է դնում մեր առջև։

Հանդիսավոր ժողովի մասնակիցները հավաստիացրին, որ Սովետական Հայաստանի գիտնականները, ընդլայնելով ստեղծագործական կապերը եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների և մյուս գիտական կենտրոնների հետ, արժանավայել կերպով կդիմավորեն հարազատ կոմունիստական կուսակցության XXV համագումարը, որը կսահմանի մեր հասարակության զարգացման նոր փուլը, կնշի սովետական գիտության առաջադիմության նոր հեռանկարներ։

⁂

Վերջում Հայաստանի արվեստի վարպետների ուժերով տրվեց ճոխ համերգ։

(Արմենպրես)